ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ‘ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ’ ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԸ

08.02.2014 16:02



Եվրոպայի խորհուրդը ավարտել է հայ փաստաբաններից և իրավապաշտպաններից ընտրված 30 դասավանդողների վերապատրաստումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (ՎԵՍԽ) կիրառման հարցերի շուրջ՝ գլխավորապես ուշադրություն դարձնելով խտրականության չափանիշներին: Վերապատրաստման չորս փուլերից վերջին եռօրյա վերապատրաստումը տեղի է ունեցել այսօր փետրվարի 8-ին:

Միջոցառմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, Եվրոպական Միության հայաստանյան ներկայացուցչությունը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Տրայան Հրիստեան և Հայաստանում Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի նորանշանակ ներկայացուցիչ **Օլեքսանդր Պավլյուկը**:

Վերապատրաստման համար մրցույթի միջոցով ընտրված շուրջ երեսուն փաստաբաններ և իրավապաշտպաններ հետագայում իրենց փորձը կփոխանցեն իրենց գործընկերներին՝ 2014թ. մարտ ամսից մեկնարկող հաջորդական դասընթացների ընթացքում: Նոր հավաստագրված դասավանդողները կշարունակեն դասավանդել նաև Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության համատեղ ծրագրի ավարտից հետո:

Ողջունելով ներկաներին Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը կարևորել է այս ծրագիրը և նշել. ‘**կարծում եմ այս վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքները կփոխանցեք նաև ձեր գործընկեր փաստաբաններին**’ :

«Լիահույս եմ, որ դասավանդողները կշարունակեն կատարելագործել ստացված գիտելիքները և հմտությունները, որպեսզի հաջողությամբ իրականացնեն հաջորդական դասընթացները, ինչը հնարավորություն կտա նշանակալիորեն ամրապնդել հայ փաստաբանների և իրավապաշտպանների կարողությունները խտրականության չենթարկվելու իրավունքը կիրառելու հարցում»,- նշել է դեսպան Օլեքսանդր Պավլյուկը: Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության դեկավար Տրայան Հրիսթեան ընդգծել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Վերանայված

եվրոպական սոցիալական խարտիայի կիրառման կարևորությունը և դասավանդողներին մաղթել է հաջողություններ իրենց գիտելիքները փոխանցելու հարցում: ՀՀ փաստաբանների պալատը հանդիսանում է տեղական մակարդակով այս ծրագրի հիմնական գործընկերը:

Այս միջոցառումը կազմակերպվել է ԵՄ և ԵԽ համատեղ «Փաստաբանների և իրավապաշտպանների կարողությունների ամրապնդումը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (ՎԵՍԽ) ներպետական կիրառման նպատակով» ծրագրի շրջանակներում: Հիշատակված տարածաշրջանային ծրագրի իրականացումն ընդգրկում է Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովան, Ռուսաստանի Դաշնությունը և Ուկրաինան:

Առաջարկվող նորություններ

20.09.2013ՀՀ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՀՀ ՓՊ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻՆ

18.11.2013ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ

25.10.2013ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

11.11.2013ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԿՄԵԿՆԻ ՖՐԱՆՍԻԱ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })